

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/7

30 մայիսի 2017թ.

Քննարկվեց ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 14.04.2017թ. «ՖԱՐՄ ՍԻՍԱՐ» ՍՊԸ 28.02.2017թ. վարչական բողոքը մասնակի բավարարելու մասին որոշման պահանջները կատարելու հարցը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի 07.02.2017թ. նիստում քննության է առնվել «ՖԱՐՄ ՍԻՍԱՐ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 29.12.2016թ. թիվ 1011481 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է 6/2 որոշումը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 29.12.2016թ. թիվ 1011481 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժվել:

Ընկերությունը համաձայն չլինելով Հանձնաժողովի 07.02.2017թ. թիվ 6/2 որոշման հետ, այն բողոքարկել է ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով:

Հանձնաժողովի 07.02.2017թ. թիվ 6/2 որոշումը և ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 29.12.2016թ. թիվ 1011481 ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ «ՖԱՐՄ ՍԻՍԱՐ» ՍՊԸ-ի բերված բողոքի քննության արդյունքում ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի կողմից 14.04.2017թ. կայացվել է որոշում, որի համաձայն ընկերության բողոքը բավարարվել է մասնակի՝ բեկանվել է Հանձնաժողովի 07.02.2017թ. թիվ 6/2 որոշումը, ինչպես նաև հանձնարարվել է Հանձնաժողովին ընդունել նոր վարչական ակտ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 14.04.2017թ. որոշման 1-ին կետը

ո Ր Ո Շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 29.12.2016թ. թիվ 1011481 ակտի 4-րդ կետից նվազեցնել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի հիմքով հաշվարկված և վճարման առաջադրված տուգանքները՝ ընդհանուր գումարով 4.096.087 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ